ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 439- Ա

27 օգոստոսի 2021 թ.

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆԻՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1287-Ն որոշման պահանջներն և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի նոյեմբերի 5-ի N 487 որոշման 1-ին կետի բ) ենթակետն ու Սևակ Խլղաթյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանին տրամադրել 2020-2021 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդը՝ 2021 թվականի օգոստոսի 30-ից մինչև հոկտեմբերի 8-ը ներառյալ (29 աշխատանքային օր):

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրան կփոխարինի Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ Ալբերտ Աղեկյանը:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

4. Սևակ Խլղթյանին աշխատանքի մեջ համարել 2021 թվականի հոկտեմբերի 11-ից:

27.08.2021

X

ՆԱՐԵԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Подписано: MANUKYAN NAREK 2203890517

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ն. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ք.Գավառ